147. ԷԼԼԱ ԷՆ ԱՌԱՉՎԱՆՆ ԱՍԵ...

Մին գեր ծանդր հիվնդանում ա։ Մոնելա մոտե սըերտը ծո̈ւվա օզում։ Կնգանն ասում ա.—Մին ծո̈ւ իփի, ոտեմ, էլլա մըեռնում ըմ, մըեռնեմ։ Կնեգյը ծո̈ւն իփո̈ւմ ա, տամ մարթին։ Մարթը ծո̈ւն ոտում ա, մըեռնում։ Կոխկե շիներքան քառասուն գեր ըն կյամ, վըեր տրան թաղեն։ Շինացեքյ վըեր լոխ հըվաքվում ըն, գերին յիրա լա̈ց ինո̈ւմ, կնեգյն էլ ա ըսկսում լա̈ց ինիլը՝ ասում ա.—Ա՛մաա՛րթ, վըեր մոռըլական իր, էն ծո̈ւն խե՞ կերեր, վըեր կերած չինիր, հավեն տակեն կըտինի, թոխսը կընստար, ճոտ տո̈ւս կըկյա̈ր, ճոտը կըմըծանար հավ կըտըեռնար, ծո̈ւ կածար ծո̈ւվանքը կըտինի հավեն տակեն, թոխսը նստըցնի, ճոտեր տո̈ւս կըկյին, էտ ճոտերն էլ կըմըծընին, հավեր տըռնին, էտ հավըերը ծո̈ւ կըծին, ծո̈ւվանքը հըվերեն տակեն կըտինի, ճոտեր կըտըռնին, էտ ճոտերն էլ հավեր կըտըռնին, ճոտերըս կըշըտըռնին, հավերըս կըշըտըռնին, կըշըտըռնին... էտ քառասուն գերին մաչին մին քոռն էլ ա ինո̈ւմ, տա թա՝ դիրակեն, լա̈վ է՛, լա̈վ, օրիշ պեն ասե։ Դիրակենը թա՝ հե՛ ա՛ քոռ գեր, հինչ ա՞սեմ, վըեր մոռըլական ար, ծո̈ւն հո՞ր կերավ, կերած չինա̈ր, թոխսը կըտինի, ճոտ տո̈ւս կըկյա̈ր, ճոտը կըմըծանար հավ տըեռնար, հավը ծո̈ւ կածար, ծո̈ւվանքը հավեն տակեն կըտինի, ճոտեր տո̈ւս կըկյին, ճոտերըս կըմըծընին հավեր տըռնին...

Դիրակենը վըեր հա̈մին սո̈ւքյն անում ա, զաթումն էլ էտ գերին քոռ ինիլն ասում, քոռ գերն էլ թա՝ լա̈վ, լա̈վ, էլլա առաչվանն ասե։